

իսկ գիտութեանց արքունական ճեմարանը պատուաւոր անդամութեան իրաւունք տուաւ շանթարգելի հեղինակին և պատուեց զնա առանձին ոսկի մեդալով:

Որ Ֆրանկլինի փառաւորութեամբը նորա քաղաքակիցներն ևս պարծենալու էին—ինքն ըստ ինքեան հասկանալի է: Աեանքի ամենայն ասպարէզներու վրայ հաւասարապէս շահաւէտ ու կորովի մարդուն իրենց խորին յարգանքը յայտնելով՝ քաղաքացիք նահանգային խորհրդաւորի պաշտօն տուին նորան և վերջապէս պատգամաւոր ընտրեցին ընդհանուր ժողովի համար: Իացի այդմանէ տեղական վարչութիւնը դատաւորի պաշտօն յանձնեց նորան և բոլոր դաղթականութեանց փոստերու գլխաւոր վերատեսուչ կարգեց: Եթէ այնուհետեւ Ֆրանկլինի քաղաքակիցները նորա քաջագործութեանց լուրը կը լսէին, օրինակի համար, թէ ինչպէս 500 կամաւոր զինուորներու առաջնորդելով ձմեռուայ մէջ նահանգի հիւսիսային սահմաններէն շնդիկները վռնտեց ու սահմանները բերդերով պատսպարեց, թէ ինչպէս առանձին տեսակ հնոց մը հնարեց, բայց արտօնագիրը մերժեց, ասելով թէ ամենայն մարդ պարտաւոր է գիւտերն առանց անձնական շահի ժողովրդին նուիրելու, նա մանաւանդ որ աշխարհս մարդ չկայ որ ինքն ևս նախորդներու գիւտէն օգուտ քաղած չլինէր,—առաւել չէին զարմանար, այլ կը լսէին. «դէհ, նա ամեն բան կարող է, աշխարհ նորամէն դեռ շատ բարիք կը տեսնէ»,:

(Ծանօթութիւն):

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՄԵՆԱՍՏԱՆ

Ի ՀԱՅ ՈՅ ԹԱՌ

Երբեմն անուանի և երեւի՝ իսկ բաւական ժամանակէ հետէ իսպառ աւերակ և տխրատեսիլ Ամենափրկիչ անուանեալ Մենաստանն՝ որ շաւուց կամ շայոց—Թառ կոչեալ գիւղէն դէպ յարեմուտս մի վերստ և կէսի չափ (կամ սակաւ ինչ աւելի) հեռու՝ Գառնեոյ գեղջ հանդէպ՝ Ազատ գետին հարաւային կողմը՝ լեռան ի լանջս՝ առանձին բլրակ ձևացած ի դաղթն՝ տափարակ՝ գեղեցիկ և բարձր դիրք ունենալով զուարճալի և ընդարձակահայտեաց տեսարան և բարեխառն օդ ունի:

Իարձր և ամուր պարիսպներով շրջանակի պատեալ է բուն Ամենափրկիչ Մենաստանը, որոյ մեծ դուռն հարաւ. պարսպին արեւելեան անկեան մերձ է:

Ի միջի նոյն պարսպաց՝ երկու աւերակ եկեղեցիք կան միմեանց մօտ և գրեթէ կից: շարաւային կողմինը «Գրիգոր Մագիստրոսի ի ՆԻԻ» (1013) շայոց թուականին շինել տուածն է *): Իսկ հիւսիսայինը ի ՈՂՆ (1712) ազգ. թուարեւութեանս Աստուածատուր կաթողիկոսին նորոգ կառուցանել սկսածն է, որ ցաւաթոռսն հազիւ հասուցանելով՝ Աով. կասեան ելուզակների յաճախ և աւերիչ

(*) Յայտնիկ միջոցս շատ վանքեր՝ ոմանք առ ժամանակ ինչ բարձի թողի մնացեալ ի բնակչացս, բազումք իսպառ ամայացան և այժմ՝ հետզհետէ շինութեանց թուլանալով՝ յերկիր կ'տապալին, և ի յաւերակսն տափալք և բուեր կը բնակին:

յարձակմունքներէն ստիպեալ՝ կիսակատար մնացեալ է *) :

Գրիգոր Մագիստրոսի շինել տուածն կ'բաժանի ի տաճար և ի գաւիթ, խորանը սակաւ ինչ խոնարհած է: Արկու կողմը ունի պահարաններ, ինչպէս Աստուածատուր կաթողիկոսի շինել սկսածն ևս ունէր: Ե խնութեանց դիրքերէն և այլ ինչ ինչ նշաններէն կիմացուի՝ զի թէ տաճարը և թէ գաւիթը դմբէթաւոր եղած են, վերջինն նաև հաստ սեանցն վրայ զարդարեալ է, ըստ որում ցարդ կ'մնան սիւնքըն՝ վերին և ներքին խարխաքն, որոց մի քանիսը քակած և արտաքս ցան և ցիր դրուած են գուցէ 1712 Փրկ. թուին միջոցները, և մի քանիսը թաղուած կը մընան փլատակներու մէջ ի գաւիթն:

Արկու եկեղեցեաց որմունքն ևս կոփածոյ քարերով կառուցեալ են, ինչպէս նաև դմբէթքն եղած են, սոցա վերայ և ոչ մի կարևոր արձանադրութիւն չկարողացայ գտանել բաց ի սեանց՝ վերին և ներքին խարխաք և մի քանի քարից վե-

րայ եղած աննշան և անթուական յիշատակադրութիւններէ, որովք վանուց պայծառութեան օգնելով՝ փող կամ հող ևն. տալով, ձրի ծառայութիւնք անելով՝ ի փոխարէնն սուրբ պատարագներ մատուցանել սահմանուած լինել կ'իմացուէին, միմիայն կարևոր արձանադրութիւն եղած է: Չոր երջանկայիշատակ Սիմէօն կաթ' ի Ղաֆուէն (ինչպէս նաև Եւսէփաթունեանց Ապիսկոպոսի ստորադրութեան մէջ հրատարակեալ է) հանած՝ ստորև կ'հաղորդեմ ընթերցողաց:

Այս մենաստանիս համար ի ՇՂԳ (684) Հայ. թուականին հաստատուած է կը գրէ Սիմ. կաթ. ի Զամբուն, սակայն ի սկզբանն ինչ անուռ ունեցած լինելը, և թէ մենաստան է եղած՝ չէ բացայայտ: Թէև հաւանական կարծիք կայ մենաստան լինելոյն վերայ, ուր առաջին անգամ մի եկեղեցի կառուցանել տուած է Գեորգ իշխանն Վեղացոյ, որոյ հիման նշմարանքն կ'երևին երկու աւերակ եկեղեցեաց յարևելակողմն:

Սիմէօն կաթողիկոսն կը գրէ թէ՝ առաջին Աշոտ իշխանն իւր որդի Սմբատ քաջ Բագրատունւոյ ձեռամբ ստանալով Փրկ. անձեռագործ պատկերը ի Պօլսոյ, շինեց այս վանքը և կոչեց Աֆեփուէն: Իսկ Եւսէփաթունեանց՝ մեր հին պատմագրաց համաձայն կասէ, թէ Բիւրատեան Աշոտ Գարեւից իշխանի որդին (Սմբատ) ի Յուսաստանէ բերելով այն պատկերը՝ ի Սոգովիտ գաւառ ի Գարիւնս (— Հին—Պայտաղիտ) առ հայրն՝ անդ Ամենափրկիչ անուամբ մի եկեղեցի կանգնեց, և ինչպէս Ղևոնդ պատմիչ կը գրէ. "իւր ոստանին մէջ, և Այս հաւանեմ և համաձայն Եւսէփ-

(*) Սերևի թէ արժանայիշատակ Եւսէփաթունեանց ինքն անձամբ ականատես չէ եղած Ամենափրկիչ վանուց, որ Գրիգ. Մագիստրոսի շինած եկեղեցւոյ շինութեանց նշմարանքները չկայ կասէ: Ի՞նչ են ուրեմն պարսպաց մէջ եղած երկու աւեր եկեղեցիք: Աստուածատուր կաթողիկոսին շինել տուածն ոչ թէ Մագիստրոսի կառուցածին տեղւոյն վրայ է, այլ առնթիւն, և մինչև անգամ գուցէ զայն ևս կրկին շինել կամեցած է, զի նորա կոփածոյ սև և մօխրագոյն քարից ձեռք զարկած էին, ուստի կամեցած է փլատակները մաքրել տալ. իսկ նոր շինուածին կարմիր քարերը բոլորովին նոր կտրուած և բերել տուած է ի մերձակայիցն:

խաթունեանցին: Իայց երեք հարիւրի չափ տարիններէն զինի՝ որպիսի և իցէ միջոցներով Պարիզ. Մագիսարոս ի ձեռս բերելով զայս Ամենափրկիչ անուանեալ պատկերը՝ փոխադրած է յիւր կալուած ի Հայոց—Թառ, և նորա արեւմտեան սահմանը մերձ ի Վառնի կառուցանելով մի չքնաղ եկեղեցի, անդ զետեղած է զնոյն պատկերը: Ուստի կը հետեւի թէ՝ երկու եկեղեցիներ (կամ վանքեր) եղած են ի Հայաստան Ամենափրկիչ անուամբ, որոց առաջինը շինած է Աշոտ իշխանն Իւրաւանեան Վարիւնից յստորոտս, երկրորդը կառուցած է Պարիզոր Մագիստ. և առաջնոյն Ամենափրկիչ անուանեալ պատկերը անդր փոխադրած, յորմէ և զանունն առած: Այժմ՝ երկուքն ևս աւերակ են, և առաջնոյն բոլորտիքը (չին—) Պայազիտ քաղաքին գերեզմանոցն է, և եկեղեցին ցարդ Ամենափրկիչ կը կոչուի ի բնակչացն: Իսկ պատուական պատկերը կը գտնուի ի Մայր աթոռս ի սուրբ Լճմիածին, և որ մեր եկեղեցւոյ փառաւոր և պանծալի հնութիւններէն և նախնեաց յիշատակարաններէն մինն է*):

(*) Աստ կարեոր է այս պատկերիս վերայ տեղեկութիւն ինչ տալ ընթերցողացս ինչպէս զըրած է Հաջխաթունեանց:

Սոյն այս Ամենափրկիչ անուանեալ Յիսուսի ի խաչէն իջման պատկերը Յովհաննէս Աւետարանչի ձեռագործ է ըստ Գրիգոր Մագիստրոսի, և երկար քառանկիւնի անփուտ փայտեայ տախտակի վրայ է: 3 թիւ և 4 մաստ երկարութիւն ունի, 1 թիւ 7 մաստ լայնութիւն, իսկ թանձրութիւնը երկու մասնաչափ է: Ի գագաթ Խաչին կայ Հայրական Աջոյն նշան, և նորա ստորեւ Յիսուսի աղանակերպ Հոգին՝ ըստ աւետ. բանին՝ «Հայր

Վաւք կրկին (վերջին) Ամենափրկիչ տեղագրութեան:

Վանուց հիւսիսային պարսպին զրիթէ կիսէն սկսեալ դէպ ի յարեմուտս՝ զետակին կամ ձորոյն վերայ կը մնան շինութիւնք, այսինքն միաբանաց կիսակործան սենեակք, և արեւմտեան պարսպին ցկէսն՝ տնտեսատուն, և այլ պիտոյից տեղուանք՝ ինչպէս մեծ դումանոց, փռատուն ևն: Պարսպաց արեւմտեան հիւս. անկիան միջ գտնուած շինուածոց ի վերայ կը նշմարուին վանահօր բնակարանք, և տակաւին կղիտուէին երկուց սենեկաց բաժանմունքները, դրանց սեմից և սեանց պատուանդանաց և որմոց տեղերը:

Ի վանս մտանելոյ հարաւ. մեծ դրան արեւել. սեմին կից մի աղբիւր կայ՝ որոյ ջուրն այժմ ցամաքեալ է: Այս ջրոյ ամուր շինուած ճանապարհը լեռան վերայով կ'երթայ մինչ ցՀայոց—Թառ: Ա'երեւի թէ զետնաբուղիս մի աղբիւրէ առնուած է այս ջուրը, որ այժմ անյայտացած է, և ճշդիւ չկարողացայ իմանալ թէ այն ճանապարհին ջուրը ուստի՞ բերեալ է:

Վանուցս միջ ոչինչ կարեոր յիշատակարան գտանել չկարողացայ բաց յայն

ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ, . . . Ղուկ. գլ. ԻԳ. հմբ. 46: Խաչին երկու կողմը երկու մարդիկ կան, որոց աջակողմեանը՝ Յիսուսի բազուկը խաչէն ազատելով արկեալ է ուսին վերայ, և նորա մարմինը ձեռքերով բռնած է. իսկ ձախակողմեանը ի ձեռին ազցան բռնած բեւոր կը քաշէ Յիսուսի ձեռքէն և խաչէն, Յիսուս և այս նշանակածներս հանդերձ խաչին և տախտակին չորեքկուսի եզերքով զրուագեալ փորածոյ են, և միւս մակերեւոյթ տախտակին ամենեւին հարթ հաւասար է:

մանէն՝ զոր վերև յիշեցի, և որ արդէն հրատարակեալ է բարեյիշ. եպս. Շահ-խաթուն. զոր և մեք աստէն ի լոյս տալ արժան կը դատիմք:

«Թուին 'ՆԿԻ' (1013) ի Թաղաւորութեանն Գաղկայ և ի Հայրապետութեան Տեառն Սարգսի, ես Գրիգոր Սագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողացն իմոց. նաև ի տերանց աշխարհիս զանձազին արարի զվայրըս սորա լերամբն և դաշտամբն և ամենայն կազմութեամբն որ ի սմա(՝) քառադէմբ(՝) չորս անկեամբ յաջամբ և ահեկամբ(,) ի դիմաց և ի թիկանց: Եւ տուաք յիշատակ անջնջելի արձանազրով և աշխարհակալ Թաղաւորի Թղթովն և կայսերական կնքովն, հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակովն: Եւ ի նաւակատիս տաճարիս(՝) զոր շինեցաւ, ընծայեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս(,) որ է Հայոց—Թառ, հանգստարան և օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ մօր Տեառն մերոյ սուրբ Լստուածածնի, և նորոգեալ հաստատեցաք վերստին սուրբ ուխտս վերջինս քան զառաջինն. աստ եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ Եկեղեցւոյ*): Գրիգոր Սահրամ Պիտանին: ,,

(*) Ազգիս բանասիրաց ուշադրութիւնը կը հրաւիրեմ, զի Սագիստրոս և աստ գրելով որ երէտ զվէմն հաստատեցաք ձեռագրովն, կը ահնարկէ և կ'իմացնէ Քրիստոսի ս. Իսաչը, ուստի և յօդս կը ցնդին պապամոլից ջանքերը և մեկնութիւնքը ի բանն կեցողորէ ծառայէ + զոր ի

Եյս Եմենափրկչեան վանուցս արեւմտեան կողմը հազիւ մի քառորդ վերստ ի բացեայ**) կայ (մենաստանիս) միաբանաց գերեզմանատունն՝ իրր փոքրիկ սրածայր բլրակի վերայ յիշերս գետակին, յորում քառակուսի՝ կարմիր և սև կոփածոյ քարերով շինեալ մի գեղեցիկ եկեղեցի ունի, որոյ խոնարհեալ դմբէթին հատուածքն ինչ ցարդ կը փնային: Խորանին յերկուս կողմունս կամարակապ պահարաններ կան ինչպէս Հայաստանի բոլոր վանօրէից և եկեղեցեաց մէջ ևս (կան) բաց ի մատուռներէն:

Սորա բոլորախոր քսանի չափ գերեզմանաքարեր կը տեսնուին այժմ: Եյս Եկեղեցւոյ մէջ զիւրընթեռնելի շատ արձանադրութիւնք կը գտնուին, բաց ի մի քանիններէն՝ որոնք կ'ուրատեալ և մաշկալ են՝ ինչպէս արտաքուստ արեւմտեան դրան վրայինները,—բայց ոչ ամենը թիւ ունէին, թող զի կարեորք ևս չէին: Շատ

Հրոյս գահէն վերապարտեցեք՝ որ երբն զվէմն հաստատեցաք ձեռագրովն Եկեղեցւոյ ևն: Քանզի Սագիստրոս բարեմաղթելով իւր որդւոյն համար՝ որ քաղաքական աստիճանով ինչ վերապատուեալ և մեծարուած էր ի կայսրէն Վ. Պօլոյ այսինքն ի Հրոյս գահէն, ուր յայնժամ Փրկչ սուրբ Խաչը նոյն կայսերական մայրաքաղաքին մէջ կը փառաւորուէր և կը պանծայր, սոյն խօսքերը քան զայս աւելի նպատակ և մեկնութիւն կը պարունակեն՝ մանաւանդ զի իմաստն կերելի պարզադոյնս:

(**) Յայսմ միջոցիս ի տեղիս տեղիս վիճեր կամ փոսեր կան, որք ոչ մինչ ցերեանն հոգերով լցեալ էին: Սոցա մէջ ցորեան և այլ կարեւոր պարէն և պարագայք կը պահեն եղած ի պէտս վանուցս: Այսպիսի վիճեր աս հասարակ ամենայն վանօրայք և զիւրօրայք ունին մանաւանդ ի Հայաստան:

իղձ կալայ զբան վրայի արձանագրութիւնքը առնուլ, բայց նախ՝ թիւ չունենալով, երկրորդ՝ փող կամ այգի և կամ հող տուած՝ ի փոխարէնն Պատարագ սահմանեալ լինելը կը յայտնէին, և երրորդ՝ զբուռար և խիստ վտանգաւոր էր խարխուլ տեղը, և ի հեռուստ անկարելի էր ընթեռնուլ:

Այս եկեղեցւոյ արեւմտ. հարաւային պատին անկեան կից կիսակամար մի մատուռ կայ, որոյ մէջ պատին վերայ զըտնուած արձանագրութիւնն ևս աւելորդ համարեցի՝ հետաքրքրական և արձան. թուական չլինելով:

Գերեզմանատան և Եկեղեցւոյ արձանագրութեանց կարեւորները ահաւասիկ կը հաղորդեմք փափագողաց:

Հիւսիսային պատին վերայ: «Ամառքըն Աստուծոյ ես Գիրք և ամուսին իմ Շաքարս միաբանեցաք Ամենափրկչիս և գնեցաք զտանձողան Ջոշիկին * ք * ի Ռսպ. և տուաք ի սուրբ ուխտս(.) և սպասաւորք տեղիցս խոստացան ի տարոջն Գ. աւր պատարագել զԲ(բեհագոս), Բ. աւրն ինձ և Բ. աւրն Շաքարին. և կատարիչն աւրհնին: ՉԽԲ թվ: , ,

Նոյն եկեղեցւոյ արեւմտեան ճակատին դէպ ի անկիւնը՝ պատին կից մի խաչարձանի պատուանդանի վերայ—որոյ նման և ի հիւս. կողմն այսինքն արեւմտ. դրան յերկուս կողմունս ևս լինել կընշմարուի, որոյ խաչաքարն և պատուանդանն չգիտեմ ինչ եղած է,—հետեւեալը արձանագրուած է. «ՈՒ թվ. *) Ես Սարգիս

անպիտան Վահանայ կանկնեցի զսուրբ նշան Քրիստոսի (ի) բարեխաւսութիւն ինձ և ծնաւդաց լմոց և շնորհազարդ աշակերտի իմոյ Աշոտոյ(.) որք երկրպագէք() յիշեցէք աղա. . . : , ,

Նաեւ եկեղեցւոյ արեւմտ. ճակատին հիւս. անկեան դէմ յանդիման մի տապանաքար կայ, որ հետեւեալ արձանագրութիւն և թիւն ունի:

«Ի թվ. ՈՂԼ. **)

փոխեցաւ

Մոնկուկ

որն ի Վրիստոս յիշեցէք . . . : , ,

Պարսպապատ Ամենափրկչ. վանուց հարաւ. արեւելեան կողմը կոփածոյ քարերով կառուցուած փոքրիկ բայց կիսաւեր մի մատուռ կայ Ո. Արապկա անուամբ, զոր երախտագէտ երեք աշակերտք կանգնած են իւրեանց բարերարաց վերայ, որք գուցէ վարդապետ կամ կրօնաւոր եղած լինին: Այս մատուռը հիւս. արեւմտ. անկեան վերայ ունի շինութեան արձանագրութիւն և թուական ամբողջութեամբ:

Սոյն այս մատուռն երկայնութիւնը 23 թիղ, լայնութիւնն 13 1/2 է. արտաքուստ բարձրութիւնը 14 թիղ, իսկ ի ներքուստ կամարին մէջ տեղէն ցգետինն 22 1/2 է:

Աստ հանգստարան եղած է, բայց թէ այս ևս միաբանաց է՝ թէ հասարակաց՝ զհաւաստին դժուարացայ տեղեկանալ:

ռակարանը արեւմտեան երեսին ընդ երկայնութիւնն:

(**) Վերջինն դժուարիմաց եղած է ինձ ճշդիւ Ե կամ Է լինել:

(*) Թուականը փորագրեալ է պատուանդանին հիւս. կողմը արեւմտ. անկեան վերայ, իսկ յիշա-

Ահաւասիկ արձանագրութիւնն:

“ԹՎ. ՈՒԼԻ: Հ նորհիւն Աստուծոյ մէք նուստ աշակերտք Աթայ և Սիմեոնի Սոսթանէս և Մաթէոս և Գրիգորէս շինեցաք զսուրբ Սարապետս ի վերայ շերմաց սոցա (.) և Առաջնորդիւ սուրբ ուխտիս սահմանեցին Բ. Ճրագալոյցն վասն հոգոց նոցա և այլ ննջեցելոցն որ յայսմ հանգստարանիս: ,

Գեռ չկնքած համառօտ Տեղադրութիւնս՝ պատշաճ կ'համարիմ յաւելուլ, զի երբեմն Արեւանայ վիճակին Առաջնորդ կը բնակէր այս վանուցս մէջ, որ խիստ պատուաւոր կը համարուէր մինչև անգամ երբ նորա Առաջնորդ կը գայր ի Ս. Եջմիածին, զանգակները կը հնչեցնէին: Աստ վանահայր եղած է Գրիգոր Վկայասէրն ևս որդին Մագիստրոսի:

Այս վանուցս անցքերը շատ են, և Առաջնորդքն բազում նեղութեանց, տառապանաց և յափշտակութեանց հանդիպած ինչպէս յամին 1602 ևն:

Այժմեան Վկ. Սթոյգիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգ Գ' երբ ի 1868 թուականին օդափոխութեան զնացած էր ի Գեղարդ, յատուկ Սոնդակաւ սոյն Ամենափրկչիս աւեր վանքը յանձնեց Գեղարդայ վանահօր Միքայէլ վարդապետին՝ զնա ինքն՝ կարգելով վանահայր նաև սոյն վանուցս Ամենափրկչի, որպէս զի շէնցնէ զայն ըստ կարելոյն ազատելով ամայութենէ և աւերակութենէն, և իւր կողմանէ մի փոխ վանահայր կարգելով՝ խնամք տանի և հոգայ նորա պէտքերը, վարէ շրջակայ սեպհական հոգերը, միանգամայն պայծառացնէ զայն, ուր շատ յարմար է մի հոգև. ուսումնարան հիմնել և ազգօգուտ հանդիսացնել:

Բայց նորին Վկ. Օծութեան Ս. Հայրապետի Սոնդակալ անգործադրելի մնացած է Գառնուոյ անտառապետի և վանահօր Զամյեանցի ի մէջ պատահած մի կրօնոյ համար, սակայն երբ և իցէ մտադրութեամբ է վերանորոգել զայս և պայծառացնել, վանորոյ և այլ կարեւոր միջոցներ տնօրինած է Ս. Հայրապետս: Եղիլ թէ՛ Հառիճոյ վանուց վերայ գտնուած Աղեքսանդրապօլցի բարեսէր ազգայիններէ ջանիւք Յովսէփ Աւագ Քահանայի Սոստանեանց կազմուած արդիւնաւոր ընկերութեան նման մի ընկերութիւն կազմելով Արեւանայ ազգայինք մեր՝ զարդարէին սոյն Ամենափրկչի վանքս, և հիմնէին անդ մի հոգևոր ուսումնարան, և վիճակին համար ուսեալ և կրթեալ քահանայացուք հասուցանէին աստի: Թէև Արեւանայ թեմ. դպրոցն ևս բաւական կարէր լինել, բայց տեղոյն օգ շրջակայ զիւղօրէից մանկտեաց համար անտանելի է, թողում ուրիշ անյարմարութիւնքը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ.

Ա.

ՅԱՌԱՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ.

Մարդիկ ասում են, թէ ամեն բան հեռուից աւելի լաւ է թվում, քան թէ մօտիկից. ինչ բնաբան կամ զաղափար կայ այդ զրոյցի մէջ, ես չեմ քննում այժմ,